ԵՐՎԱՆԴ ԹԵՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ (ANSEF) 2024 Թ. ԳԻՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

15 օգոստոսի, 2023 թ

Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամը (ԳԿՀԱՀ/ANSEF) հրավիրում է 2024թ. գիտական դրամաշնորհի մրցույթի: Դիմումները պետք է ներկայացվեն ԳԿՀԱՀ առցանց հարթակներով՝ www.ansef.org կամ https://schrodingersdog.net/: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2023 թվականի հոկտեմբերի 31-ը: Մրցույթի արդյունքները կհայտարարվեն 2023 թվականի դեկտեմբերի 17-ին: Լրացուցիչ հարցերի համար խնդրում ենք գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ help@ansef.org:

ԳԿՀԱՀ/ANSEF 2024թ. դրամաշնորհային մրցույթի պայմաններն են.

- Դրամաշնորհի գումարը 7500 ԱՄՆ դոլար է: Դրամաշնորհը վճարվելու է միանգամից: Դրամաշնորհային ծրագրի տևողությունը մեկ տարի է:
- Ծրագրի ավարտից հետո մինչև 2025թ.-ի հունվարի 15-ը անհրաժեշտ է վերջնական հաշվետվություն ներկայացնել նախ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղին, այնուհետև՝ ANSEF-ի գործադիր խորհրդին:
- Դրամաշնորհային միջոցները հասանելի են միայն Հայաստանում գտնվելու ընթացքում հետազոտություն իրականացնողներին:
- Հետազոտական խմբի ղեկավարը պետք է լինի գիտական կարիերայի վաղ փուլում գտնվող գիտությունների թեկնածու, համալսարանի կամ գիտահետազոտական հիմնարկի կրտսեր կամ ավագ գիտաշխատող, դասախոսի օգնական, ավագ դասախոս կամ դոցենտ:
- Դրամական խրախուսանք ստացող հետազոտական խմբի անդամներ կարող են լինել համալսարանի կամ գիտական հիմնարկի աշխատակից մագիստրոսները, ասպիրանտները, հետդոկտորները, դասախոսները կամ գիտաշխատեղները:

Մրցույթին դիմելու համար ոլորտային սահմանափակումներ չկան:

Կխրախուսվեն հումանիտար ոլորտի դիմումները:

Սահմանվել է ամերիկահայ գիտնական Ներսես Գրիգորյանի անվան հատուկ դրամաշնորհ, որը կշնորհվի ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի կամ քիմիայի բնագավառի լավագույն հետազոտական ծրագրին:

Ներսես Գրիգորյանի մասին կարդացեք այստեղ. https://en.wikipedia.org/wiki/Nerses_Krikorian:

Նախկինում Երվանդ Թերզյանի անվան ԳԿՀԱՀ գիտական դրամաշնորհին www.ansef.org –ի միջոցով դիմած հայտատուները նոր հայտ ներկայացնելիս կարող են օգտվել նախորդիվ գրանցած հաշվից: Նոր դիմորդները պետք է նախ գրանցվեն, ստանան էլ. հասցեին ուղարկված հաստատող գրություն և նոր մուտք գործեն հաշիվ:

ԳԿՀԱՀ-ի պորտալի հետ կապված այլ տեխնիկական հարցերի պարզաբանման համար խնդրում ենք գրել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ website@ansef.org:

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ